

ՎԱՐՊԱՎԱՌԸ ՎՐԱՑՈՑ ՄԷՁ

Վարդապետը՝ Հայոց ամենաքանչիւի տօնն է, որ սովորաբար գալիս է Ջատկից 14 շաբթից կամ 98 օրից յետոյ, կիրակի օրը, ամառային խիստ տապ եղանակին: Այս տօնը, ինչպէս ենթադրում են, մնացորդ է հեթանոսական շրջանից, երբ հայերը, հետևելով Յունաց օրինակին, վարդ էին նուիրում իրենց Աստղիկ շաստուածուհուն ¹⁾:

Վարդավառ կամ Վարդաւոր ²⁾, re-sp. Վարդկուր | Վարդիւոր ³⁾ կոչուած տօնի իսկական իմաստն զեռ լուսարանուած չէ, սակայն՝ հիմնուելով ազգագրութեան տուեալների վրայ, անկասկած, պէտք է այն եզրակացութեանը գալ, որ դա հեթանոս Հայոց ամենահրաշալի ու մեծապայծառ տօնն է եղել և այնպիսի ժողովրդականութիւն է եղել վայելելիս, որ քրիստոնէական շրջանում փոխանակուել է, ոմանց կարծիքով՝ Փրկչի Պայծառակերպութեան, իսկ ոմանց կարծիքով՝ Ս. Աստուծոյ Կարապետի տօնով, թէպէտ և պէտք է չ՛մոռանալ, որ այժմեան Վարդապետին միաժամանակ տօնում է թէ Փրկչի Պայծառակերպութիւնը և թէ սուրբ Կարապետի յիշատակը:

Բայց հնում Վարդապետը յայտնի է եղել ոչ միայն Հայոց, այլ և Յունաց և Վրացոց մէջ, Օրինակ, Կապպադովկիայում, չնայեա՞ծ այն հանգամանքին, որ այդ երկրի բնակիչները՝ այսինքն կապպադովկացիք՝ յունարէն են խոսում թէ տաճկերէն, ցայսօր կենդանի է մնացել ժողովրդական՝ այսպէս կոչուած Βάρτουβάρ

1) Ալիբան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վեներիկ 1895 թ., էր. 283, 306—307:

2) Վ. Աղայեանց, Վարդապետ, թէ վարդաւոր, — «Երջ» պատկերադարձ նրացոյց—հանդէս 1904 թուականի, խմբագրութեամբ Ս. Քոփչեանի, սիւն. 393—396:

3) Սահակ վարդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ 1919 թ., էր. 601:

თონը, որ ფაქია ჯ. ზაათიყ 6 ჯარქმისე ქათოქ ლირახი ორე¹⁾; რასე
 ფრავ აგრხერნერხ მღვ. ნოქნ თონრ ლოჯილქ ჯ. ვარდოდა ვარდოფია:

წათნე ქოგოლადქა ნაქათათაქნ ჯ. დანოქმავნხე ჯ. აქ ენქმერეგოქნ
 ფრავ «ვარდოფია» — რ. ჯ. ნათ:

«*ვარდოფია*» (ვარდოდა) რათრ, ორ რაქლავად ჯ. ვარდო ვარდ-
 ფოქაქან ანთონისე ჯ. რადა ორე ქათათაქა მათნისე, რათავე
 მარქმანთქმათრ ნჯანთაქილქ «*ვარდოქ თონ*»: მჯათისე დნთილქ
 ჯ. ანთილქ ჯ. ვარდოდალქ—თთვე ვარდოფია—რრულქ, vulg. ვარდოდალქ—თვე
 ვარდოფია—რქ, აქთნერე *ვარდოქ თონ* (ვარდოქ) *ამრია*, ლამ
 ჯათარახ მათქ ვარდოდალქ ვარდოფია, ორ ენქანერათაქა რავა-
 თრულქ ჯ. რრულქ *ამაქია*» *ამრია*²⁾; ორ ვარდოფია—რქ, resp. ვარ-
 დოფია, ნჯანთაქილქ «*ამაქია*» *ამრია*, ლა თქნერე ჯ. რნერათნ-
 რან. ექ ორ აქე *ამრია* ჯ. ორ რავილქ ჯ. დოქქისერისე ქათათოქ-
 ნერ³⁾ *ვარდოქ* რავე ერანისე, ჯ. აქ აქე ქათათათქ აქნე რათრ ქიჯა-
 თათილქ ჯ. ჯ. რ. ვრავთე *ამრია*ნერხ ჯ. თათათქ ანთონთავთიქ
 მღვ.

აბი თათნისე — ქათათარ (არავ)

სარქლენისე თარქოქნისე — თათრულქ (მანისე)

მთქან მირქანისე — მარათ (არულქ)

ორთქ ქოქილქ — თარქ (ანისე)

ვარდოდალქ ვარდოფია — მათია (მარულქ)

მარათისე მარქათათათ — ქათნისე (მარავ)

თილქ მარქათათ — ქათნისე (ჯათისე)

ქველთილქ რქქმარქათათ — ოქათათ (ნათათარქ)

ანთონისე თათქმარქათათ — თათთმარქ (ნათისე)

სოქლთისე თქქათათათ — თათთმარქ (ათათისე)

ქათთილქ თქქათათათ — თათთმარქ (არქ)

ქათთილქ თქქათათათ — თათთმარქ (რავთე)³⁾

წათრ ჯ. თათათ, ორ ფრავ რათარანთთილქ მარდოდა ვარ-
 დოფია რათრ თათათარახ რავათრულქ ჯ. რრულქ *ამაქია*» *ამრია*:

1) ნ. შათ., Арк'аунъ, монгольское названіе христіанъ въ
 связи съ вопросомъ объ армянахъ—халкедонитахъ (არათათქ.
 •Византийскій Временикъ•-რ. ჯ. XII რქ), თათ. 1903 შ., სრ.
 35—36:

2) შათრ—შათქათან ოქქქათანისე, ქათთული ლექსიქონი, მარქია
 1884 შ., სრ. 99:

3) ჯ. შ. შ. ჯათთქქქქქქ, Описание рукописей Церковнаго
 музея духовенства грузинской епархіи, გ. III. მარქია, 1908 შ.,
 სრ. 117:

Յակայն ուսուցչապետ Ն. Մառը սրա գէժ առարկում է այն հիման վրայ, որ հին Վրաստանում, ինչպէս և Հայաստանում, տարեցոյցը շարժական ամիսներով է եղել¹⁾։ Եւ իբրք, պ. Մառի ասելով, գոյութիւն ունին տուեալներ յօգուտ այն պարագայի, որ այնքան հեշտ էլ չէ նոյնացնել «վարդօրիսա»-ն այժմեան «մայիս» ամսուայ հետ։ Օրինակ, հին Աթոնի Իվերոն վանքի XI դարու վրացերէն ձեռագիր «Վարք հարանց»-ի մէջ, որ ըստ պ. Մառի, հայկական ազդեցութիւն է կրում, «վարդօրիսա»-ն յիշատակում է դեկտեմբերի 28-ին կարդացուելիք վկայարանութեան սկզբում։

თუცა დევნებულსა კცა ესენებათ წმინდათა მკრძქულთა პეტრესი და პავლესი ერთმის შინა იწინაბეს რვისა დღისა ერთობისა წამებათ პეტრესი²⁾

Ամսեան դեկտեմբերի 28-ին՝ Յիշատակ սրբոց առաքելոց Պետրոսի և Պաւղոսի [նահատակուած] հոռմում, [որ տօնում է] վարդօրիսա-ից ութ օր առաջ։
Վկայութիւն Պետրոսի։

Ինչպէս պ. Մառը իրաւացի նկատում է, այս ձեռագրի մէջ թէպէտ « Պետրոսի վկայութիւնը յիշատակուած է դեկտեմբերի 28-ին, սակայն նոյն ձեռագրի գրչին, անկասկած, յայտնի պէտք է լինէր Պետրոսի և Պաւղոսի այն տօնը, որ գալիս է յունիսի 29-ին, և հէնց այդ հանգամանքն է, որ գրգեղ է այդ գրչին գետեղել ձեռագրի մէջ վերոյիշեալ յիշատակագիրը։ Ուրեմն, նոյն յիշատակագրի հիման վրայ կարելի է այն եզրակացութեանը գալ, որ «վարդօրիսա»-ի տօնը կատարուելիս է եղել յուլիսի 7-ին (29 յունիսի + 8 օր)։

Իրականութեան մէջ յայտնի է նաև մի այլ տուեալ յօգուտ «վարդօրիսա»-ի։ Դա՛ կաստանդնուպօլսի յայտնի պատրիարք Յովհանն Պահոզի Նորաչառնոս-ի վրացական վերսիան է, ուր, ի միջի այլոց, յիշատակուած է՝

რითა მათ მარხუათა ქრისტეშობისა და წმინდათა მოკვქულთასა, რომელსა ერთველნი ერთობისათ უწოდენ (ձեռագրի մէջ սխալմամբ՝ ուწოდեն³⁾).

Երկու պատ, այն է՝ Քրիստոսի ծննդեան և սրբոց առաքելոց, օրին (այսինքն վերջինիս) վրացիք անուանում են վարդօրիսա։

1) Ն. Մառ., օր. cit., եր. 54.
 2) Ն. Մառ., Агиографическіе матеріалы по грузинскимъ рукописямъ Ивера, т. I (արտատպութիւն «Записки Вост. Отд. Рус. Арх. О-ва»-ի հրատ. XIII-ից), Պետր. 1901 թ., եր. 49, հմմ. Ն. Մառ., Архаунъ etc, եր. 54.
 3) Ն. Ա. Զաօգրակիյ ևն Ա. Ս. Խախաբույ, Номокановъ

Իսկ այս յիշատակագիրը հետաքրքիր է այն տեսակէտից, որ սրա մէջ «վարդօրիսա»-ն հանդէս է գալիս իրրև պաս, այսինքն իրրև առաքելոց պաս, որ իսկապէս, ըստ յոյն-վրացական տօնացոյցի, յունիսին է լինում (առաքելոց տօնը՝ յունիսի 29-ին)։

Այստեղ կամայ-ակամայ հարց է ծագում՝ արդեօք էապէս տարրեր էին վրացոց մէջ այսպէս կոչուած «վարդօրիսա»-ն և առաքելոց պասը, թէ սոքա լոկ 2 տարրեր անուններ են մէկ և միևնոյն պասի, որ գալիս է յունիսին։ Այս հարցին առայժմ, դժբաղդարար, կարելի է պատասխանել միմիայն ենթադրարար, ինչպէս այդ անում է և պ. Մառը, այն է՝ որ յունիս ամսին գալիք առաքելոց պասը կոչուել է «վարդօրիսա» այն պատճառով, որ հէնց այդ ժամանակ հեթանոսական շրջանում յայտնի է եղել հոշակաւոր «վարդօրիսա» տօնը։

Յօգուտ «վարդօրա»-«վարդօրիսա»-ի կան նաև այլ տեղեկութիւններ վրաց հին գրականութեան մէջ, Այսպէս, Սինայի ս. Եկատերինայ վանքի մի վրացերէն ձեռագիր «Շարակնոց»-ի մէջ պ. Մառը առիթ է ունեցել քանիցս կարդալ՝ 15 մայիսի ներքոյ՝ ვარდობაა ღმრთის-მშობლისა ¹⁾ վարդօբար դմրիս-დოբլիოայ, այսինքն «վարդօրա Աստուածածնի»։ Թէ ինչու «Աստուածածնի վարդօրա»-ն յիշատակուած է այս ձեռագրի մէջ մայիսի 15-ին, այդ հարցին առայժմ, դժբաղդարար, նախաւորութիւն չկայ պատասխանելու։ Միմիայն կասենք, որ այսպէս թէ այնպէս՝ հին վրացոց մէջ յայտնի է եղել թէ «վարդօրա» տօնը, որ գալիս է եղել, ոմանց ասելով՝ մայիսի 15-ին, իսկ ոմանց ասելով՝ նոյն-իսկ յունիսի 7-ին, և թէ «վարդօրիսա» ամիսը՝ «մայիս» ամսուայ իմաստով։

Վերջապէս, սոյն «վարդօրիսա»-ն յիշատակուած է ս. Շուշանիկի վկայարանութեան վրացական վերսիայի մէջ, որ վերագրուած է V դարու վրաց գրող՝ Յակոբ Երէցին։ Վերջինիս մէջ մենք, ի միջի այլոց, կարդում ենք, թէ ինչպէս Շուշանիկի

ვანკა [ოვო] ვარდობისა თთუნსა
 ათქრამეცა ²⁾.)

տանջանքը [სეა] վարդօրիսա
 ամսուայ տան և իննին։

Ioanna Postnika въ его редакціяхъ грузинской, греческой и славянской, *Մակվա* 1902 թ., եր. 66 և ծանօթ. 1 նոյնտեղ. հիմ. Ն. Մառ., *Арк'аунъ etc.*, եր. 54—55։

1) Ն. Մառ., *Арк'аунъ etc.*, եր. 57։


2) იაკობ ხუცესი წამეგათ წმიდისა შუშანისა, *խմբագրութեամբ* Ս. Ռ. Գարգամեի. *Գուժայիս* 1917 թ., եր. 22 (= *საქართველოს სამოთხე წერათ. ᄡ. Սարիճիճի, Գետր.* 1882 թ., եր. 192)։

Այսպէս, ուրեմն, վրացոց մէջ երբեմն գոյութիւն է ունեցել Վարդապետ տօնը, թէպէտ և այժմեան աուելալների հիման վրայ բոլորովին անկարելի է որոշել, թէ ի՞նչ կերպարանք է եղել ընդունած այդ տօնը հնում, մասնաւորապէս այն ժամանակ, երբ հայ և վրաց քոյր եղեգեցիների մէջ տիրում էր կատարեալ միութիւն և համերաշխութիւն, այսինքն մինչ VII դարու սկիզբը:

Այդ ժամանակուանից երկար ու ձիգ դարեր են անցել, և Վրաստանի կուլտուրական կեանքում քիչ բան չի փոխուել. սակայն Վարդապետի տօնը, որ ցայսօր կենդանի է մնացել Հայոց մէջ, իսպառ անհետացել է Վրաց ասպարիզից, յիշատակ անգամ չ'թողնելով իր մասին Վրաստանի որ և է անկիւնում: Եւ այսօր միմիայն՝ Վրաց-կաթոլիկների այսպէս կոչուած ջո՛ղոն-ղցեո՛ծ վարդիս-փեկօբա, այսինքն Վարդապարդ, հինաւուրց տօնն է, որ գալիս է մեզ յիշեցնելու երբեմնի Վարդօբա-ի մասին¹⁾:

Լ. Մելիքսեթ-Բեկեան.

Թիֆլիս. 9-XII-1917.



1) Հմմ. ջո՛ղոն-ղցեո՛ծ յոգուածը «չջո՛ղո ջո՛նոն» շարաթա-
սերթի Ռէլ, 1906 թ., № 10.